ՀՏԴ:281.6

Doi:10.54503/0135-0536-2025.1-57

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԾՈՒՄԸ ԸՍՏ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IV – XII դդ.)*

ԵՂԻՇԵ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ կաթողիկոս, ձեռնադրություն, օծում, տվչություն, մատենագրական տեղեկություններ, պատմիչներ, շրջափուլեր:

Ամփոփում

Կաթողիկոսական ձեռնադրության և օծման վերաբերյալ հիշատակություններ կարելի է հանդիպել մատենագիրների երկերում, որոնց մեջ, սակայն, գրեթե չկան ծիսակարգի մանրամասն նկարագրություններ: Մատենագրության մեջ կաթողիկոսական ձեռնադրության դրվագների առկայությունը և դրանց բովանդակությունը թույլ են տալիս եզրակացնել, որ ծիսակարգը զարգացել է աստիճանաբար: Այն IV դ. մինչև XII դ. անցել է «սաղմնավորման», «ձևավորման» կամ «կայացման» շրջափուլերով: XIV դ. սկսած՝ «Մաշտոց» ծիսարաններում մանրամասն հիշատակված է կաթողիկոսական ձեռնադրության և օծման կանոնը: Մեզ հասած մատենագրական կցկտուր հիշատակությունները գալիս են լրացնելու ծիսակարգի ստեղծման և ձևավորման մասին եղած տեղեկությունների պակասը:

Նախաբան

Ձեռնադրությունն եկեղեցու կարևոր խորհուրդներից է: Այն բառացի արտահայտում է «ձեռք դնել», «օրհնել», «օրհնվել» իմաստները: Խորհրդի ակունքները պետք է փնտրել Աստվածաշնչում: Ձեռնադրության մասին առաջին հիշատակություններն արձանագրված են Հին Կտակարանի Ելից գրքի 28-րդ և 29-րդ գլուխներում: 29-րդ գլխում Աստված Մովսեսին՝ Ահարոնի և նրա որդիների ձեռնադրության վերաբերյալ հրահանգներ է տալիս՝ ասելով. «Եւ առցես յիւղոյ անտի օծման, եւ արկցես ի գլուխ նորա եւ օծցես զնա: Եւ զորդիս նորայ պատմուճանս. եւ ածցես նոցա կամարս, Ահարոնի եւ որդւոց նորա, եւ նոցա ապարօշս. եւ եղիցի նոցա այն ինձ քահանայութիւն յաւիտենական, եւ կատարեսցես զձեռս Ահարոնի եւ զձեռս որդւոց նորա» (Ելք 29:7–9): Իսկ 28-րդ գլխում, քահանայական զգեստների հրահանգների մասին արձանագրված է հետևյալը. «Եւ զգեցուսցես զայն Ահարոնի եղբօր քում, եւ որդւոց նորա ընդ նմա, եւ օծցես զնոսա, եւ լցցես զձեռս նոցա, եւ սրբեսցես զնոսա զի

** Ներկայացվել է 18. I. 2025 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, փ. գ. դ. Հ. Քյոսեյանը (15. VIII. 2024 թ.): Ընդունվել է տպագրության 27. III. 2025 թ.:*

քահանայասցին ինձ» (Ելք 28:41): Սուրբգրային տեղիներից երևում է, որ ձեռնադրության ամբողջ խորհուրդը կատարվում է յուղով օծմամբ, որով ձեռնադրյալը սրբվում է և քահանայանում:

Նոր Կտակարանում ձեռնադրության կամ «ձեռք դնելու» տեղիներն են (Գործք 6:6, 8: 17–19, 14:22, 19:6, Ա Տիմ 4:14, 5:22, Բ Տիմ 1:6, Եբր 6:2 և այլն): Գործք առաքելոցի 6-րդ գլխում ներկայացվում է առաջին սարկավագների ձեռնադրությունը, թե ինչպես առաքյալները «աղաւթս արարեալ՝ եդին ի վերայ նոցա զձեռս» (Գործք 14:22): Եթե Հին Կտակարանում ավելի բացատրված ձևով էր պատկերվում ահարոնյան քահանայական ձեռնադրությունը, որը տեղի էր ունեցել յուղով օծմամբ, ապա Նոր Կտակարանում այն աղոթքով էր և ձեռնադրությամբ. « ... աղաւթս արարեալ՝ եդին ի վերայ նոցա զձեռս»:

Այսպես, ձեռնադրության խորհրդի հիմքն Աստվածաշունչն է: Առաքյալների ժամանակ, երբ ձևավորվում էր վաղ եկեղեցին, գոյություն ունեին նվիրապետական 3 աստիճաններ՝ սարկավագ, երեց ու եպիսկոպոս, և բոլորն էլ այդ կարգերը ստանում էին ձեռնադրությամբ, որը լինում էր անձի ընտրությամբ, նվիրյալի վրա «ձեռք դնելով և աղոթքներով»:

Եկեղեցու ստեղծմանը զուգընթաց՝ ավելանում են նվիրապետական աստիճանները, ու ձևավորվում է դրանք շնորհելու ծիսակարգը՝ հիմք ունենալով աղոթքով «ձեռք դնելու» արարողությունը:

Հայ եկեղեցու ծիսական կարևոր արարողակարգերից է կաթողիկոսական ձեռնադրությունը և օծումը: Այն դարերի ընթացքում անցել է ծիսական զարգացման տարբեր շրջափուլեր: Ճիշտ է, մատենագրական երկերում Հայրապետական ձեռնադրության ծիսակարգի վերաբերյալ առկա հիշատակությունները մինչև XII դ. սակավ են և ծիսական մանրամասն նկարագրություններից զուրկ, սակայն պետք է արձանագրել՝ եղած հիշատակություններն էլ բավական են պնդելու համար, որ այն ստեղծվել է Հայ եկեղեցում և ուրույն տեղ զբաղեցնում նվիրապետական աստիճանակարգում:

Կաթողիկոսական ձեռնադրությունը IV–VI դդ.

V դ. հայ մատենագիրների երկերում ոչ շատ մանրամասն, սակայն ուշագրավ հիշատակումներ կան կաթողիկոսական ձեռնադրության վերաբերյալ: Ի մասնավորի, Ագաթանգեղոսը տեղեկություններ է հաղորդում Լուսավորչի՝ Վաղարշապատում հայրապետական ընտրությունից հետո Կեսարիայում քահանայական և եպիսկոպոսական ձեռնադրություն ստանալու վերաբերյալ՝ նշելով հետևյալը. «Եւ եղեալ ժողով բազմութեան եպիսկոպոսաց ի քաղաքն Կեսարացւոց, զի ձեռնադրեսցեն զսուրբն Գրիգորիոս եւ աւանդեալ ի նա զպատիւ խոնարհութեան քահանայութեանն Քրիստոսի, եւ զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեանն Աստուծոյ, զպատիւն եւ զփառսն մեծ»[1]: Ակներև է, որ Սբ. Գրիգորը քահանայական և եպիսկոպոսական աստիճաններն ստացել է Կեսարիայում[2]: Հաջորդիվ Ագաթանգեղոսը ձեռնադրության ծիսակարգից մի դրվագ է ներկայացնում. «Սրբով Աւետարանաւն եդին ի վերայ նորա ձեռս ժողովք եպիսկոպոսացն, որոց գլխավորն Ղեւոնդիոս, զի առցէ նա

---

[1] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. 2003, 1689:*

[2] *Հմմտ. Օ ր մ ա ն ե ա ն. 1959, 44:*

իշխանութիւն յերկինս եւ յերկրի, առնուլ զփական արքայութեանն երկնից՝ կապել եւ լուծանել յերկրի»[3]: Պարզ է արդեն, որ եպիսկոպոսական ձեռնադրությունը կատարվել է եպիսկոպոսների ձեռամբ, Ավետարանով և Կեսարիայի Ղևոնդիոս հայրապետի գլխավորությամբ: Սբ. Գրիգոր Լուսավորչի գահակալական արարողությունները կատարվել են Հայաստանում: Պետք է արձանագրել, որ Սբ. Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը (325–333), չուղևորվեց Կեսարիա՝ ձեռնադրվելու, քանի որ Լուսավորիչը նրան «ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր», «եւ անդէն նստաւ յաթոռ կաթողիկոսութեան Հայոց Մեծաց»[4]: Սա վկայում է այն մասին, որ Գրիգոր Լուսավորիչը, լինելով Հայոց եպիսկոպոսապետ, այսուհետ իրավազոր էր իր փոխանորդին ձեռնադրելու, ուստի Արիստակեսի պարագային կարիք չկար Կեսարիա գնալու և ձեռնադրություն ստանալու: Լուսավորչի ավագ որդու՝ Վրթանեսի (333–341) կաթողիկոսական ձեռնադրության վերաբերյալ տեղեկություններ մեզ չեն հասել. պատմիչները բավարարվում են նշելով հետևյալը. «Յաւուրս սորա եկաց եւ եղեւ քահանայապետ յաթոռն հաւրն, փոխանակ հաւրն իւրոյ եւ եղբաւրն իւրոյ, երէց որդին Գրիգորի Վրթանէս ...», «Ապա առաքեցին թագաւորն Խոսրով եւ մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս ...»[5]: Ըստ Մաղաքիա արքեպս. Օրմանյանի՝ Վրթանեսը քահանայական և եպիսկոպոսական ձեռնադրությունները ստացել է իր հորից (Գրիգոր Լուսավորչից) և Արիստակեսից հետո հռչակվել հայրապետ[6]: Համաձայն Բուզանդի՝ Սբ. Վրթանեսի որդին՝ Սբ. Հուսիկը (341–347), Կեսարիայում ձեռնադրվել է կաթողիկոս, իսկ հետո զբաղեցրել հայրապետական գահը. «... նստուցին զնա յաթոռն առաքելոյն Թադէոսի, և յաթոռ իւրոյ հաւոյն Գրիգորի»[7]: Ներսես Մեծը (353–373)[8] նույնպես Կեսարիայում է ձեռնադրվել, իսկ գահակալությունը ստանձնել է Հայաստանում, որը, հավանաբար, ուղեկցվել է կաթողիկոսական տվչությամբ կամ օրհնությամբ. «Ապա ձեռնադրեցին զնա, եւ հանին նստուցին յաթոռ եպիսկոպոսութեանն»[9], իսկ հետո Հայաստանում՝ «... նստաւ սուրբն Ներսէս յաթոռ հայրապետութեան»[10]: Մեջբերումներից պարզ է դառնում, որ Ներսեսը Կեսարիայում ստացել է ոչ թե հայրապետական ձեռնադրություն, այլ՝ «յաթոռ եպիսկոպոսութեան»: Վերադառնալով Հայաստան՝ նա նստում է «յաթոռ հայրապետութեան», իսկ գահակալությունը կատարվում է, հավանաբար, կա-

---

[3] Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. 2003, 1689:

[4] Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. 2003, 1717:

[5] Բ ո ւ զ ա ն դ. 2003, 279–280:

[6] Հմմտ. Օ ր մ ա ն ե ա ն. 1959, 62–63:

[7] Բ ո ւ զ ա ն դ. 2003, 292:

[8] Փավստոս Բուզանդի հայտնած տեղեկությունների համաձայն՝ Ներսես Մեծը սկզբից զինվորական է եղել: Պարթևական տոհմից սերելու և իր առաքինի վարքի շնորհիվ նրան են ընտրել Լուսավորչի աթոռի արժանի հետևորդ: Ընտրությունից հետո ձեռնադրում են սարկավագ. «... եւ կոչեցին զծերունի եպիսկոպոսն՝ որում անուն էր Փաւստոս, եւ տայր զնա ձեռնադրել ի սարկաւագութիւն» (Բ ո ւ զ ա ն դ. 2003, 313): Անհայտ է մնում նրա քահանայական ձեռնադրությունը, որը, հավանաբար, Հայաստանում է ստացել, իսկ եպիսկոպոսականը՝ Կեսարիայում:

[9] Բ ո ւ զ ա ն դ. 2003, 314:

[10] Բ ո ւ զ ա ն դ. 2003, 314:

թողիկոսական տվչութիւնից հետո կամ ընթացքում՝ Մեծ Հայքի եպիսկոպոսների մասնակցութիւամբ:

V դ. նշանաւոր հայրապետներից է Գիւտ Ա Արահեզացին (461–478), որը Սահակ-Մեսրոպյան կրտսեր աշակերտներից էր: Իր կաթողիկոսութիւն վերջին շրջանում նա պարսից Պերոզ արքայի հրամանով մեկնել է Տիզբոն: Բանն այն էր, որ հայոց նախարարների մի մասը, Գաղիշո Խորխոռունու գլխաւորութիւամբ, Պերոզի առջև ամբաստանել էին Գիւտին՝ իբրև դավաճանի[11]: Գիւտ կաթողիկոսը Տիզբոնում արժանավայել պատասխաններ է տալիս պարսից արքայի հարցերին և անսասան մնում իր հաւատի ու կարգի մեջ (այս մասին կարևոր վկայութիւններ է հաղորդում Ղազար Փարպեցին)[12]: Պատմիչի հայտնած տեղեկութիւնների համաձայն՝ Պերոզ արքան պատգամաբերի միջոցով դիմում է Գիւտին՝ ասելով. «Մինչեւ ցայժմ քո գիշխանութիւնդ առանց իմ հրամանի կալեալ է, եւ ծառայ մարդիկ են, որոց քեզ զայդպիսի մեծ գործ տուեալ է, եւ ոչ ինչ յինէն ունիս վստահութիւն ... Ապա թէ յամառեալ չհաւանիս կատարել զկամս իմ՝ զեպիսկոպոսութիւնդ ի բաց առնում ի քէն եւ ի գործոցդ ի բաց հանեմ»[13]: Գիւտը, պարսից արքային հակադարձելով, պատասխանում է. «... թե ցայժմ քո ի ծառայից եւ ոչ յինեն կալեալ գործակալութիւն՝ թե դու կամ թէ ոք ի ծառայիցն քոց որ ետուն, եւ առնուք յինէն՝ ուրախ եմ եւ կամիմ ... Իսկ յաղագս եպիսկոպոսական ձեռնադրութեանս որ ասես, թէ ի բաց առնում ի քէն՝ զայս երկնաւոր ձեռնադրութեան պատիւ առնուլ յինէն ոչ թագաւորք եւ ոչ յիշխանաց ոք, այլ մահ, ոչ իշխէ, քանզի եւ կարէ իսկ ոչ»[14]: Ի վերջո, Պերոզը Գիւտին զրկում է կաթողիկոսական պաշտոնից. «Կա՛ց ուր կամիս, բայց ի գործոյ կաթողիկոսութեանդ հեռի ես, եւ չէ քո»[15]: Պատմիչի հաղորդած տեղեկութիւնները, մասնաւորապես՝ Գիւտի պատասխանները կաթողիկոսական աստիճանի վերաբերյալ, կարող են թյուրըմբռնում առաջացնել, ինչը տեղ է գտել Վարդան Հացունու երկում[16]: Այն, որ եպիսկոպոսութիւնը նվիրապետական աստիճան է և տրվում է ձեռնադրութիւամբ, կասկածից վեր է, իսկ համարել, որ կաթողիկոսութիւնը եղել է լոկ միայն կոչում կամ պաշտոն, այնքան էլ իրատեսական չէ: Նախ՝ Գիւտ Արահեզացին ուղղակի իմաստով չի հայտնում, որ կաթողիկոսութիւնն աստիճան չէ: Նա միայն հիշատակում է հայրապետական իր գործունեութիւնից, պաշտոնից (իշխանութիւնից) հրաժարվելու մասին, այլ ոչ թե կաթողիկոսական տվչութիւնից: Հայրապետի պատասխանից կարելի է եզրակացնել, որ կաթողիկոսական ձեռնադրութիւնը, իբրև ծիսակարգ, ինչպիսին եպիսկոպոսական ձեռնադրութիւնն էր, դեռևս ձևավորված չէր, այլապես Գիւտը նման պատասխան չէր տա: Այս վկայութիւնը չի բացառում կաթողիկոսական աստիճանը, այլ միայն թույլ է տալիս եզրակացնել, որ V դ. կաթողիկոսները, հավանաբար, տվչութիւամբ կամ գահակալութիւամբ էին իրար հաջորդում, իսկ հայրապետական ձեռնադրութեան ծեսը ձևավորված չէր և գտնվում էր «սաղմնավորման» փուլում:

---

[11] Օրմանեան. 1959, 218–219, Մովսիսեան. 2008, 174–175:
[12] Փարպեցի. 2003, 2308–2311:
[13] Փարպեցի. 2003, 2309–2310:
[14] Փարպեցի. 2003, 2310:
[15] Փարպեցի. 2003, 2311:
[16] Հացունի. 1923, 108–112:

VI դ. մատենագրական երկերում կաթողիկոսական ձեռնադրության վերաբերյալ հիշատակությունները սակավ են: Արժեքավոր տեղեկություններ կան Բաբկեն Ա Ողմսեցի կաթողիկոսի (490–516) «Ա. թուղթ հայոց ի Պարս, առ ուղղափառս»-ի մեջ[17]: Ի թիվս այլ տեղեկությունների, այս դավանաբանական թղթի մեջ արտացոլվում է կաթողիկոսական ձեռնադրության շարունակական լինելը. «… եւ յաջորդեցաւ մինչեւ ցայժմ ձեռնադրութիւն քահանայապետութեան աշխարհիս Հայոց, եւ կամք հաստատուն ի նմին»[18]:

Այսպիսով, IV–VI դդ. կաթողիկոսական ձեռնադրության ծիսակարգը բացակայում է մատենագրության մեջ: Միայն կարելի է նշել, որ ավանդությունից մեզ հասած վկայությունների և ուսումնասիրությունների համաձայն՝ հայրապետական ձեռնադրությունը, հավանաբար, կատարվել է գահակալությամբ, օրհնությամբ կամ տվչությամբ, իսկ դա ենթադրում էր աղոթքով ընթացող ծիսական արարողություն. այսինքն՝ ծիսակարգը գտնվում էր «սաղմնավորման» փուլում:

Կաթողիկոսական ձեռնադրությունը VII – XII դդ.

Պատմիչներն ուշագրավ տեղեկություններ են հաղորդում VII դ. նշանավոր կաթողիկոս Աբրահամ Ա Աղբաթանեցու (607–615) ձեռնադրության վերաբերյալ[19]: Ի մասնավորի, Ուխտանեսն ավանդում է, որ Աբրահամը Զատկի հաջորդող կիրակի օրը ձեռնադրվում է կաթողիկոս[20]: Այդ մասին տեղեկություններ են հաղորդում նաև Մովսես Կաղանկատվացին[21] և մատենագիր ու աստվածաբան Հովհան Մայրագոմեցին[22]: VII դ. պատմիչ Սեբեոսը, առանց նշելու «ձեռնադրություն» բառը, գրում է. «Եւ նստուցին զԱբրահամ զՌշտունեաց եպիսկոպոսն յաթոռ Հայրապետութեան»[23]: Առանձնակի ուշադրության է արժանի Ուխտանեսի պատմության մեջ հիշատակվող Աբրահամի կաթողիկոսական ձեռնադրությունը: Նա հստակ նշում է, թե որ օրը և ովքեր կատարեցին ձեռնադրության կարգը: Այն կատարվել է Դվինի Սուրբ Կաթուղիկե վանքում: Հայտնի են կաթողիկոսին ձեռնադրող եպիսկոպոսներից երկուսի անունը՝ Բասենի՝ Մանասե և Սյունիքի՝ Քրիստափոր եպիսկոպոսները[24]: Կարևոր տեղեկությունն այն է, որ երկուսից ավելի եպիսկոպոսների ձեռամբ կատարվում է կաթողիկոսական ձեռնադրությունն. «Եւ Մանասէ Բասենոյ եպիսկոպոս. եւ Քրիստափոր Սիւնեաց եպիսկոպոս, այլ եպիսկոպոսք այլաւք հանդերձ [եւ]

---

[17] *Բաբկեն Ա կաթողիկոսի անունով ավանդված են Հայոց եկեղեցու դավանանքը լուսաբանող երկու թուղթ, որոնք ուղղված են Պարսկաստանի «ուղղահավատ» քրիստոնյաներին՝ ասորի միաբնակ եկեղեցուն: Առաջին թղթում գտնում ենք 325 թ. ընդունված Նիկիական հավատո հանգանակը՝ յուր նզովքով (Բ ա բ գ է ն կ ա թ ո ղ ի կ ո ս. 2004, 119):*

[18] *Բ ա բ գ է ն կ ա թ ո ղ ի կ ո ս. 2004, 119:*

[19] *Աբրահամ Աղբաթանեցի հայրապետի օրոք՝ 607/608-ին, տեղի է ունեցել վրաց եկեղեցու բաժանումը հայոց եկեղեցուց՝ վրացիների քաղկեդոնականություն ընդունելու պատճառով (Օ ր մ ա ն ե ա ն. 1959, 321–329):*

[20] *Ո ւ խ տ ա ն է ս. 2011, 551:*

[21] *Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 2011, 337:*

[22] *Մ ա յ ր ա գ ո մ ե ց ի. 2005, 357:*

[23] *Ս ե բ է ո ս. 2005, 498, տե՛ս նաև Ա ս ո ղ ի կ. 2011, 692:*

[24] *Ո ւ խ տ ա ն է ս. 2011, 551:*

ձեռնադրեն զԱբրահամ ...»[25]: Եթե հիմք ընդունենք X դ. պատմիչ Ուխտանեսի հաղորդած տեղեկությանը, պետք է եզրակացնել, որ սկսած VII դ. կաթողիկոսական ձեռնադրության ծիսակարգը միայն պարզ օրհնությամբ, տվչությամբ կամ գահակալությամբ չէր կատարվում, այլ, հավանաբար, արդեն գոյություն ուներ ոչ շատ ընդարձակ ծիսակարգ, որն իր զարգացվածությամբ տարբերվում էր IV–VI դդ. կատարվող տվչության և գահակալական արարողություններից: Հացունին ամեն ջանք ու եռանդ գործադրում է, որ հնարավորինս ուշ շրջանի վերագրի կաթողիկոսական ձեռնադրությունը: Նա կարծում էր, որ X դ. մատենագիր Ուխտանեսը կաթողիկոսական ձեռնադրության պարագային չի հիշատակում Աբրահամի եպիսկոպոս լինելը, և վկայակոչելով Սեբեոսին նշում է՝ վերջինս էլ չի օգտագործում «ձեռնադրիլ» բայը[26]: Այս ամենից եզրակացնում է. «Ոչ, այդ շրջանին դեռ աւելորդ է «ձեռնադրութիւն» փնդռել ի Հայս»[27]: Նախ պայման չէ, որ պատմիչներն օգտագործեն «ձեռնադրություն» եզրը, որպեսզի հասկանալի դառնա, որ տվյալ հայրապետն ունի կաթողիկոսական ձեռնադրություն: Պատմիչներն ամենեւին նպատակ չեն հետապնդել նշելու ձեռնադրության ընթացքը, այլ հիմնականում բավարարվել են նշելով, որ տվյալ ժամանակաշրջանում ընտրվեց, գահակալեց, ձեռնադրվեց, հաջորդեց համապատասխան կաթողիկոսը: Իսկ այն, որ Ուխտանեսը, չի հիշատակում Աբրահամի եպիսկոպոս լինելը, անհիմն է: Ուխտանեսը, նշելով հայրապետական ընտրության մասնակից եպիսկոպոսների անունները, հիշատակում է նաև Աբրահամին իբրև եպիսկոպոս. «յԱբրահամէ Ռշտունեաց եպիսկոպոսէ»[28]: Բացի այդ, ինչպես նշվեց, Աբրահամի կաթողիկոս ձեռնադրվելու մասին տեղեկություններ են հաղորդում ժամանակակից մատենագիրներ Մովսես Կաղանկատվացին և Հովհան Մայրագոմեցին, որոնք օգտագործում են «ձեռնադրել» եզրը[29]: Մաղաքիա արքեպս. Օրմանյանի ու Ներսես արքեպս. Մելիք-Թանգյանի համար Աբրահամի կաթողիկոսական ձեռնադրության ծիսականոնականությունը համարվում է ընդունելի[30]:

Նկատենք, որ արդեն IX դ. նույնպես կան հիշատակումներ կաթողիկոսական ձեռնադրության վերաբերյալ: Օրինակ՝ X դ. մատենագիր Ասողիկ պատմիչը Զաքարիա Ա Զագեցու (855–876) կաթողիկոս ձեռնադրվելու մասին նշում է. «Եւ սպարապետ Սմբատ հրամայէ ժողովել եպիսկոպոսաց եւ ձեռնադրել կաթողիկոս զԶաքարիա ի գաւառէ Կոտայից, ի գեղջէ Զագայ, որ եկաց ամս ԻԲ»[31]:

X դ. Անանիա Ա Մոկացի (946–968) կաթողիկոսն իր թղթում ոչ միայն պաշտպանում և ապացուցում է կաթողիկոսության նվիրապետական աստիճան լինելը, այլ նաև հայրապետական ձեռնադրության ծիսակարգից բխող տեղեկություններ է հաղորդում: Նա նշում է սարկավագի, քահանայի, եպիսկոպոսի ձեռնադրության մասին՝ հավելելով. «...գրեալ է՝ կոչեն զայս ոք ի դպրութենէ յաշտիճան սարկաւագութեան և զայն ոք կոչեն ի սարկաւա-

---

[25] *Ուխտանէս. 2011, 551:*

[26] *Մանրամասն տե՛ս Հացունի. 1923, 112–116:*

[27] *Հացունի. 1923, 116:*

[28] *Ուխտանէս. 2011, 549:*

[29] *Կաղանկատուացի. 2011, 337, հմմտ. Մայրագոմեցի. 2005, 357:*

[30] *Օրմանեան. 1959, 316–317:*

[31] *Ասողիկ. 2011, 709:*

գութենէ յաշտիճան քահանայութեան ... Եւ զի այս ոք, ասէ, կոչեն ի քահանայութենէ յաթոռ եպիսկոպոսութեան»[32]: Նույն կերպ է հիշատակում կաթողիկոսական ձեռնադրությունը. «Եւ զայն ոք կոչեն յեպիսկոպոսութենէ յաթոռ հայրապետութեան»[33]: Այս քաղվածքները վերցված են ձեռնադրության կանոնի «Աստվածային եւ երկնաւոր շնորհ» աղոթքից, որն այսօր երգվում է և ասվում ձեռնադրողի կողմից[34]: Աղոթքից հետո հետևում էր «ձեռք դնելու» արարողությունը, որով նվիրյալն արժանանում էր համապատասխան աստիճանին: Սա վկայում է, որ X դ. մնացյալ ձեռնադրությունների նման կաթողիկոսականն էլ ուներ իր յուրօրինակ և պարզունակ ծեսը: Անանիա Ա Մոկացու «Հակաճառական» թուղթն արժեքավոր աղբյուր է տվյալ ժամանակաշրջանի ձեռնադրության ծիսական ընթացքի ուսումնասիրության համար[35]:

X դ. հետո հայ մատենագրության մեջ շարունակում ենք հանդիպել կաթողիկոսական ձեռնադրության վերաբերյալ հիշատակումների, որոնք առանձնապես կարևոր տեղեկություններ չեն պարունակում ծիսական ընթացքի վերաբերյալ: Այդպիսի օրինակներից է XI դ. Գրիգոր Բ Վկայասերի (1066–1105) ձեռնադրությունը. «...և ամենեցուն համաձայնութեամբ յառաջ կոչեն զՎահրամ որդի Գրիգորի մագիստրոսի զորմէ վերագոյն ասացաք. որոյ ծանուցեալ հրաժարէր ի պատուոյն, անարժան վարկանելով զինքն մեծի կոչմանն, և Աստուծոյ և մարդկան միջնորդ լինելոյն: Որոց ամենեցուն բռնադատեալ կոչեն զնա յանուն նախնոյն իւրոյ սրբոյն Գրիգորի Գրիգորիս. և արժանաւոր ձեռնադրութեամբ և հոգեւոր օծմամբ նստուցանեն յաթոռ կաթողիկոսութեան Հայկայ և Թորգոմայ»[36]:

XII դ. Ներսես Շնորհալի (1166–1173) հայրապետը «Թուղթ ընդհանրականում» իր իսկ կաթողիկոսական ձեռնադրության վերաբերյալ գրում է, որ իր եղբայրը (Գրիգոր Գ Պահլավունին, 1113–1166) խնդրել էր իրեն ստանձնել հայրապետական գահը. «... նախ քան զվախճանն ազդումն եղեալ նմա ի Հոգւոյն, կոչեաց զեպիսկոպոսունս և զվարդապետս և զհարս սրբոյ լերինն, և զորս ի յայլ կողմանց: Եվ թէպէտ և մեք ի բազում անգամ կոչմանէ նորին յայսոսիկ՝ հրաժարէաք յառաջին ժամանակն, անարժան զանձն վարկանելով, սակայն յայժմոյս՝ ակամայ բռնազբօսելով զմեզ ինքն և ժողովք Եպիսկոպոսացն ձեռնադրեաց զմերս անարժանութիւն՝ յաթոռ Կաթուղիկոսութեան ազգիս Հայկայ և տանն Թորգոմայ»[37]: Շնորհալու վկայության համաձայն՝ նրան

---

[32] «Արարատ» (Էջմիածին), 1897, թիւ Զ, 276:

[33] «Արարատ», 1897, թիւ Զ, 276:

[34] Հմմտ. Մայր Մաշտոց. 2012, 423–430, Մ. Մաշտոցի անվան մատենադարան (ՄՄ), ձեռագիր № 4997, 52ա–52բ:

[35] «Արարատ», 1897, թիւ Զ, 275–288: Զարմանալի է, որ Անանիա Ա Մոկացին չի նշում կաթողիկոսական օծման մասին, այլ միայն հիշատակում է ձեռնադրությունը, ինչն առիթ է տալիս մտորելու՝ իր ժամանակ հայրապետական ձեռնադրության ծիսակարգի մեջ մյուռոնով օծումը օգտագործվու՞մ էր, թե՞ ոչ:

[36] Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց. 1854, 18, տե՛ս նաև՝ Ուռհայեցի. 1869, 230, 252–253, 412: «Եվ ոչ ոք ինքն իրեն չի կարող կաթողիկոս ձեռնադրել, այլ ձեռնադրում են չատերի միջից ամենաընտրյալին: Եվ, երբ ընտրությունը կայանա, ապա եպիսկոպոսները հավաքվելով՝ կաթողիկոս են ձեռնադրում» (Սմբատ Սպարապետ. 2008, 66):

[37] Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ. 1871, 2–3:

«ինքն», այսինքն՝ Գրիգոր Գ Պահլավունին և «ժողովք Եպիսկոպոսացն» իրեն ձեռնադրում են հայրապետ: Այս օրինակը ևս վկայում է այն մասին, որ հայրապետական ձեռնադրության ծես Շնորհալու ժամանակ գոյություն ուներ և մյուս ծիսական կարգերի հետ իր ուրույն տեղն էր գրավում ձեռնադրության ծիսակարգի մեջ: Համաձայն Միքայել Չամչյանցի[38] և Ղևոնդ Ալիշանի[39] XII դ. Հայոց եկեղեցում ձեռնադրության ծիսակարգը բարեփոխվում և ճոխացվում է: Հնարավոր է՝ այս շրջանում ավելի հստակեցվել և ճոխացվել է նաև հայրապետական ձեռնադրությունը: Ըստ Մելիք-Թանգյանի՝ կաթողիկոսական ձեռնադրությունը ձևավորվել է VII դ. առաջ կամ այդ ժամանակամիջոցին[40], իսկ Նորայր արքեպս. Պողարյանն այն տեսակետին է, որ մինչև Անանիա Ա Մոկացի կաթողիկոս կաթողիկոսական ձեռնադրության կանոն չի եղել. «Հաւանական կը նկատուի որ Մոկացիէն մինչեւ Գետադարձ երկարող շրջանին, այսինքն 968–1019 թուականներուն միջեւ հաստատուած ըլլայ կաթողիկոսական ձեռնադրութեան սովորութիւնը, որուն վրայ աւելցած է յետոյ նաև օծումը»[41]:

Մատենագրական տեղեկությունների քննության արդյունքում պարզ դարձավ, որ IV դ. մինչև VI դ. ընկած ժամանակահատված կաթողիկոսական ձեռնադրության ծեսը գտնվում էր սկզբնավորման փուլում և, կարելի է այս, ժամանակաշրջանը ծիսականոնական տեսակետից կոչել «սաղմնավորման» շրջափուլ:

VII դ. մինչև XI / XII դդ. սկիզբ ընկած ժամանակաշրջանում կաթողիկոսական ձեռնադրության ծեսը ձևավորվում է և գոյություն ուներ, թեև պարզունակ էր, սակայն իր ուրույն տեղն էր գրավում մյուս ծիսական կանոնների կողքին: Այս առումով կարելի է վերոհիշյալ ժամանակաշրջանը կոչել «ձևավորման» կամ «կայացման» շրջափուլ:

Կաթողիկոսական օծումը ըստ մատենագրական տեղեկությունների IV–XII դդ.

«Օծում» բառը բազմիմաստ է[42]: Այն նշանակում է ինչպես յուղով օծելը, այնպես էլ՝ Աստուծո կողմից օծված, ասել է թե՝ ընտրված, օրհնված լինելը: Այն կարող է արտահայտել նաև ձեռնադրություն իմաստը (օծիչ – օծող, ձեռնադրող)[43]: Բառի հունարեն համարժեքն են χρίσις, χρίσμα *բառերը (ինչպես նաև՝* օծանեմ, օծեմ, օծեալ – χεχρίσμενος, օծելութիւն, օծեմ – χρίω *բառաձևերը)[44]: Զարեհ արքեպս. Ազնավուրյանը հետևյալ կերպ է բնութագրում օծումը. «Օծումը խորհրդանիշ մըն էր, արտաքին, երեւելի նշան մը՝ Աստուծոյ կոչումին եւ կոչումի իրագործումին համար տրուած աներեւոյթ պարգեւին»[45]: Առհասարակ, ձիթայուղով կամ անուշահոտ յուղերով օծումը հրեա*

---

[38] *Չամչեանց. 1786, 144:*
[39] *Ալիշան. 1873, 182–184:*
[40] *Մելիք-Թանգեան. 2009, 707:*
[41] *Պողարեան. 1990, 103:*
[42] *Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի. 1865, 843:*
[43] *Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի. 1865, 843, Աճառյան. 1979, 611:*
[44] *Նոր բառարան հայերենէ ի յունարէն. 1868, 345:*
[45] *Ազնաւուրեան. 2007, 367:*

ժողովրդի մեջ լայն տարածված սովորություն էր, ժողովրդական իմաստով՝ ուրախության նշան, իսկ կրոնական իմաստով՝ սրբագործումի[46]: Օծման, օծության յուղի վերաբերյալ հիշատակումներ կան Հին Կտակարանում (օրինակ՝ Ծննդոց 28:18, 38:13, 35:14, Ելք 25:25, 28:42, 29:7, 30:35), որտեղ օծյալ էին համարվում քահանաները, մարգարեները և թագավորները: Աստուծո կողմից Մովսեսին տրված օրենքի համաձայն՝ Ահարոնը պետք է օծվեր քահանայագործելու համար. «Եւ առցես յիւղոյ անտի օծման, եւ արկցես ի գլուխս նորա եւ օծցես զնա» (Ելք 29:7): Հնգամատյանում ներկայացված է նաև զոհասեղանի, ինչպես նաև զոհասեղանի վրա դրված սպասքերի օծման դրվագները (Ղեւտական 8:10–11, Ելք 29:37): Օծման վերաբերյալ նկարագրություններ կան նաև Նոր Կտակարանում (Մրկ. 6:13, Ղուկ. 7:38, Յակոբոս 5:14 և այլն): Հայտնի է Բեթանիայում Տեր մեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի օծումը (26:6–7): Ոչ նյութական օծման մասին նույնպես կան վկայություններ (Բ Կորնթ. 1:21, Յովհ. 2:20, 2:27), օրինակ՝ Պողոս առաքյալը գրում է. «Այլ որ հաստատեացն զմեզ ձեւք հանդերձ ի Քրիստոս, եւ օծ զմեզ Աստուած է. եւ ետ զաւհաւատչեայ Հոգւոյն ի սիրտս մեր» (Բ Կորնթ. 1:21): Նոր Կտակարանում, ի տարբերություն Հին Կտակարանի, ձեռնադրության ժամանակ չէր օգտագործվում յուղով օծումը: Օծման սովորությունը կար ոչ միայն հրեաների, այլ նաև հեթանոս ազգերի մեջ: Այսպես՝ Եգիպտոսում քրմապետները փարավոններին թագադրելիս յուղը հեղում էին նրանց վրա[47]:

Եկեղեցական մատենագրության մեջ պահպանվել են հիշատակություններ կաթողիկոսական օծման վերաբերյալ: Օրինակ՝ V դ. պատմիչ Փավստոս Բուզանդն այդ մասին գրում է. «Ապա գումարեցին զիշխանսն մեծամեծս, զի առցեն զցանկալին Ներսէս, եւ գնասցեն ուր սովոր էին զհայրապետսն աւծանել»[48], իսկ X դ. հեղինակ Մեսրոպ Վայոցձորեցին ավելացնում է. «... ուր սովոր էին զհայրապետսն ձեռնադրել աւծմամբ»[49]: Ներսես Մեծը, ինչպես նշվել է, եպիսկոպոսական ձեռնադրություն ստացել է Կեսարիայում: Այստեղ դժվար թե կաթողիկոսական ձեռնադրության հատուկ կարգ լիներ: Հարցն այն է, թե Կեսարիայում ձեռնադրության խորհրդի մեջ յուղով օծումը կիրառակա՞ն էր, թե՞ ոչ: Եթե, այո, ապա այն Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության դրվագում, որևէ կերպ արտացոլված կլիներ, ինչպես Ագաթանգեղոսն է գրում. «Սրբով Աւետարանաւն եդին ի վերայ նորա ձեռս ժողովք եպիսկոպոսացն, որոց գլխաւորն Ղեւոնդիոս, զի առցէ նա իշխանութիւն յերկինս եւ յերկրի, առնուլ զփական արքայութեանն երկնից, կապել եւ լուծանել յերկրի»[50]: Դժվար թե օծման կարևոր դրվագն Ագաթանգեղոսն արձանագրած չլիներ: Եթե ընդունենք, որ Կեսարիայում կամ, առհասարակ, Ընդհանրական եկեղեցում IV դ. ձեռնադրության ժամանակ կիրառվել է օծումը, ապա միայն քահանայական և եպիսկոպոսական ձեռնադրության դեպքում, քանի որ կաթողիկոսական ձեռնադրության և օծման ծիսակարգի սկզբնավորումը հատուկ է միայն Հայոց եկեղեցուն: Բուզանդի և Մեսրոպ Վայոցձորեցու հայտնած տեղեկությունները

[46] Ա զ ն ա ւ ո ւ ր ե ա ն. 2007, 367:
[47] Մ ե լ ի ք-Թ ա ն գ ե ա ն. 2009, 707:
[48] Բ ո ւ զ ա ն դ. 2003, 313:
[49] Մ ե ս ր ո պ Վ ա յ ո ց ձ ո ր ե ց ի. 2010, 676:
[50] Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. 2003, 1689:

կաթողիկոսական օծման վերաբերյալ, ամենայն հավանականությամբ, կարելի է ընկալել լայն իմաստով, այն է՝ ձեռնադրության ամբողջ խորհրդի ծիսական ընթացքը, առանց յուղի կիրառության: Բաբկեն Ամոռակից Կյուլեսերյանը Կեսարիայում Հուսիկ հայրապետի ձեռնադրվելու վերաբերյալ գրում է. «... երբ Փ. Բիւզանդի մէջ կարդանք թէ «Գնացին ի քաղաքն Կեսարացւոց, ետուն ի Կաթողիկոսութիւն զՅուսիկն ձեռնադրել (Գ. ԺԲ.) պէտք չէ՛ հասկնալ, որ արդէն Յուսիկ Եպիսկոպոսը Կեսարիա տարին եւ Կաթողիկոս օծել տուին, ինչպէս որ կ՚հասկնանք հիմայ. ո՛չ, այլ թէ Յուսիկ քահանայն տարին Կեսարիա եւ Եպիսկոպոս այսինքն՝ ըստ հայոց՝ Կաթողիկոս ձեռնադրել տուին»»[51]: Հուսիկը գալիս է Մեծ Հայք, որտեղ տեղի է ունենում գահակալման արարողությունը՝ կաթողիկոսական տվչությամբ կամ օրհնությամբ: Վ. Հացունին մատենագրական երկերում հիշատակվող կաթողիկոսական օծումը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Արդարեւ ի հնուց և շատ յաճախ գործածուեր են մեր մէջ օծանել և օծումն բառերն եկեղեցականաց վրայ. բայց առնուած անկասկած անունէն օծելոյն Քրիստոսի, «զօր օծն Աստուած Հոգւով Սրբով», և եղաւ քահանայ կամ քահանայապետ յաւիտենից. և ինքն իսկ օծ իւր պաշտօնեայքը նոյն Հոգով, և մասնակից ըրաւ զանոնք իւր քահանայութեան, ըստ առաքելական բացատրութեանց ...»[52]: Հնարավոր է, որ Սուրբ Հոգու էջքը ձեռնադրյալի վրա ծիսական աստվածաբանության զարգացմանը զուգընթաց դրսևորվել է տեսանելի նյութի միջոցով՝ օրհնված յուղի կամ մյուռոնի: Շատ անգամ մյուռոնը, օծումը խորհրդանշել են նաև Քրիստոս և Նրանով օծված լինելը[53]: Կաթողիկոսական օծման վերաբերյալ հիշատակումները բազում են եկեղեցական մատենագրության և պատմագրության մեջ: Օրինակ՝ Մովսես Կաղանկատվացին նշում է հետևյալը. «Եւ երթեալ ի Հայոց աշխարհն՝ ուծանէր փոխանակ իւր զորդին՝ զՎրթանէս, նստուցանել յիւր աթոռ քահանայապետութեան»[54]: Այս և նմանօրինակ հիշատակումները բազմաթիվ են, օրինակ՝ հայրապետական օծման մասին վկայություններ կան Փավստոս Բուզանդի[55], Մեսրոպ Վայոցձորեցու[56], Սամվել Անեցու[57], Ներսես Շնորհալու[58], Վարդան Արևելցու[59], Ստեփանոս Օրբելյանի[60], Վահրամ Ռաբունու[61], Թովմա Մեծոփեցու[62], Անանուն Եղեսացու[63] և այլոց երկերում:

«Օծում» բառը կարելի է մեկնաբանել տարբեր իմաստներով՝ օծված Սուրբ Հոգով, Քրիստոսով, ձեռնադրությամբ, ընտրությամբ և այլն: Ըստ Զարեհ արքեպս. Ազնավուրյանի՝ Աստվածաշնչում «Անձերու պարագային, ինչպէս՝

---

[51] Բ ա բ գ է ն վ ա ր դ ա պ ե տ. 1903, 268:
[52] Հ ա ց ո ւ ն ի. 1930, 142:
[53] Հմմտ. Ն ա ր ե կ ա ց ի. 2013, 582–616:
[54] Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 2011, 68:
[55] Բ ո ւ զ ա ն դ. 2003, 313:
[56] Մ ե ս ր ո պ Վ ա յ ո ց ձ ո ր ե ց ի. 2010, 676:
[57] Ս ա մ ո ւ ե լ Ա ն ե ց ի եւ շարունակողներ. 2014, 332, 349, 352, 353, 355, 377:
[58] Տեառն Ներսեսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի Բանք չափաւ. 1830, 545:
[59] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 93:
[60] Օ ր բ ե լ ե ա ն. 1861, 211:
[61] Վահրամայ Ռաբունւոյ ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց. 1859, 218:
[62] Մ ե ծ ո փ ե ց ի. 2017, 88:
[63] Ե դ ե ս ա ց ի. 1982, 191:

քահանաներուն, թագաւորներուն եւ մարգարէներուն, օծումը ո՛չ միայն Աստուծոյ ընտրութեան նշանն էր (տե՛ս օրինակները Սաւուղի՝ Ա. Թգ 10.1 եւ 24, Դաւիթի՝ Ա. Թգ 16.1–3, Եհուի՝ Դ. Թգ. 9.1–3), այլ նաեւ՝ Աստուծոյ Հոգիին տրուչութեան (տե՛ս օրինակները Սաւուղի՝ Ա. Թգ. 10.1 եւ 6–7, Դաւիթի՝ Ա. Թգ. 16.13), որովհետեւ իւղը (ձիթափուղը) *ինք նշանակն է Աստուծոյ Սուրբ Հոգիին (տե՛ս Ես. 61.1)»*[64]*: Հետևելով աստվածաշնչյան օծման մեկնաբանությանը՝ եզրակացնենք, որ մատենագրության մեջ էլ շատ դեպքերում պետք է վերոգրյալ զանազան ձևակերպումներով մեկնաբանել «օծում» եզրը:*

Վերոնշյալ հիշատակություններն օգնում են ըմբռնելու և մեկնաբանելու ձեռնադրության և օծման խորհուրդը, նրա կիրառման օրինակներն ու մեկնաբանելու հնարավոր կերպերը մատենագրության մեջ:

Եզրակացություն

Այսպիսով, մատենագրական տեղեկությունների քննությամբ կարելի է արձանագրել, որ IV դ. մինչև VI դ. ընկած ժամանակահատվածում կաթողիկոսական ձեռնադրության ծեսը գտնվում էր ձևավորման փուլում և կարելի է այս ժամանակաշրջանը ծիսականոնական տեսակետից կոչել «սաղմնավորման» շրջափուլ: VII դ. մինչև XI / XII դդ. սկիզբ ընկած ժամանակաշրջանում կաթողիկոսական ձեռնադրության ծեսը, ըստ մատենագրական տեղեկությունների, ձևավորված էր և գոյություն ուներ, թեև պարզունակ էր, սակայն իր ուրույն տեղն էր գրավում մյուս ծիսական կանոնների կողքին: Այս առումով կարող ենք վերոհիշյալ ժամանակաշրջանը կոչել «ձևավորման» կամ «կայացման» շրջափուլ:

Մատենագրության մեջ տարածված «օծեցին կաթողիկոս» բառակապակցությունը ունի երեք նշանակություն կամ մեկնաբանություն՝ 1. ընդհանուր առմամբ՝ ձեռնադրվել կաթողիկոս, 2. այլաբանական իմաստով՝ օծվել Սուրբ Հոգով կամ Քրիստոսով, այսինքն՝ ընտրվել, Աստուծո օրհնությամբ կաթողիկոս դառնալ, 3. ուղիղ իմաստով՝ մյուռոնով կամ յուղով օծվել կաթողիկոս: Բոլոր իմաստներն էլ տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր ձևակերպումներով գործածվել են եկեղեցական մատենագրության մեջ:

Եղիշե սարկավագ Սարգսյան – Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի (աստվածաբանական համալսարան) գործավար-քարտուղար և դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ ծիսական և պատմական աստվածաբանություն, եկեղեցածիսական ձեռագրերի ուսումնասիրություններ: Հեղինակ է 3 հոդվածի: ORCID:0009-0005-7452-1487.
deacon.yeghishe@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ագաթանգեղոս. 2003, Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք Հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 1289–1735:

[64] *Ա ղ ն ա ւ ո ւ ր ե ա ն. 2007, 368:*

Ազնաւուրեան Զարեհ արքեպս. 2007, Աստուածաշունչին վերաբերեալ ուսումնասիրութիւններ, Անթիլիաս, 402 էջ:

Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 676 էջ:

Անանուն Եդեսացի. 1982, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12. – Ասորական աղբյուրներ Բ., ժամանակագրություն, աշխ.՝ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 268 էջ:

Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի. 1865, յօրինեաց Հ. Մկրտիչ վրդ. Աւգերեան, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 849 էջ:

Բաբգէն կաթողիկոս. 2004, [Ա] թուղթ հայոց ի պարսս. – Մատենագիրք Հայոց, հ. Գ, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 113–121:

Բաբգէն վարդապետ (Աթոռակից կաթողիկոս). 1903, Կաթողիկոսական ձեռնադրութիւն եւ օծում. – «Արեւելեան մամուլ» (Իզմիր), թիւ 12, էջ 265-271, թիւ 13, էջ 289–293:

Գրիգոր Նարեկացի. 2013, Մատեան ողբերգութեան (Նարեկ), Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 631 էջ:

Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ. 1871, Յերուսաղէմ, «Ս. Յակովբեանց», 334 էջ:

Թովմա Մեծոփեցի. 2017, Յիշատակարան, աշխ.՝ Տէր Արարատ քահանայ Պօղոսեանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպ., 115 էջ:

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, Վենետիկ, Սբ. Ղազար, 184 էջ:

Ղազար Փարպեցի. 2003, Պատմութիւն Հայոց, Թուղթ. – Մատենագիրք Հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 2197– 2395:

Ղեւոնդ Ալիշան. 1873, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ - Սբ. Ղազար, 539 էջ:

Մայր Մաշտոց. 2012, Ժ դար, հ. Ա, գիրք Ա, աշխ.՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Սբ. Էջմիածին, 920 էջ:

Մատթէոս Ուռհայեցի. 1869, ժամանակագրութիւն, Երուսաղէմ, «Ս. Յակովբեանց», 597 էջ:

Մելիք-Թանգեան Ն. արքեպս. 2009, Եկեղեցական իրաւունքը, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հրատ., 841 էջ:

Մեսրոպ Վայոցձորեցի. 2010, Պատմութիւն սրբոյն Ներսիսի. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիս-Լիբանան, էջ 631–743:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 4997, «Էջմիածին», «Կանովն յորժամ կաթողիկոս ձեռնադրեն Ամենայն հայոց», № 1461, 50բ–74բ:

Մովսէս Կաղանկատուացի. 2011, Պատմութիւն Աղուանից աշխարհի. – Մատենագիրք հայոց, հ. ԺԵ, Ժ դար, Երևան, էջ 27–437:

Մովսիսեան Յուսիկ վրդ. 2008, Հայաստանեայցս առաքելական ս. Եկեղեցւոյ պատմութիւն, Բ հրատ., Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 431 էջ:

Յովհան Մայրագոմեցի. 2005, Վասն պատերաց եւ նկարագրութեանց. – Մատենագիրք հայոց, հ. Դ, Է դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 343–359:

Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց. 1854. – Սոփերք հայկականք, ԺԴ, Վենետիկ, ի տպարանի Մխիթարեանց, 87 էջ:

Նոր բառարան հայերէնէ ի յունարէն. 1868, աշխ.՝ Տիմիթրիոս Ի. Խ. Չօլագեան, Կոստանդնուպօլիս, տպագրութիւն Ռուբենի Յ. Քիւրքճեան, 360 էջ:

Չամչեանց Միքայէլ վրդ. 1786, Պատմութիւն Հայոց, Հ. Գ, Վենետիկ, ի տպարանի Յովհաննու Փիացեանց, 1092 էջ:

Պողարեան Նորայր արքեպս. 1990, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 120 էջ:

Սամուել Անեցի եւ շարունակողներ. 2014, ժամանակագրութիւն, աշխատասիրութեամբ՝ Կարեն Մաթեւոսյանի, Երեւան, «Նաիրի», 504 էջ:

Սեբէոս. 2005, Պատմութիւն. – Մատենագիրք հայոց, հ. Դ, է դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 453–565:

Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ. 2011, Պատմութիւն տիեզերական. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, ժ դար, Երևան, էջ 619–829:

Սմբատ Սպարապետ. 2008, Դատաստանագիրք, փոխադրության հեղինակ և խմբագիր՝ Մաքսիմ Անդրանիկի Ոսկանյան, Երևան, «Իրավունք», 240 էջ:

Ստեփաննոս Օրբելեան. 1861, Պատմութիւն տանն Սիսական, աշխ.՝ Մկրտիչ էմին, Մոսկվա, 386 էջ:

Վահրամայ Ռաբունւոյ ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց. 1859 (կից Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» փարիզյան հրատարակությանը), Փարիզ, էջ 181–248:

Վարդան Հացունի. 1923, Պատմութիւն հին հայ տարազին պատկերազարդ, Վենետիկ, Սբ. Ղազար, 467 էջ:

Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի պատճառ յաղագս զԽոսրով նզովելոյն զԱնձեւացւոց եպիսկոպոսն. – «Արարատ» (էջմիածին), 1897, թիւ Զ, էջ 275–288:

Տեառն Ներսեսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի Բանք չափաւ. 1830, Վենետիկ, 621 էջ:

Ուխտանէս եպիսկոպոս. 2011, Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, ժ դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 441–616:

Փաւստոս Բուզանդ. 2003, Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք հայոց, հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 273–428:

Օրմանեան Մաղաքիա արքեպս. 1959, Ազգապատում, հ. Ա. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Պէյրութ, տպ. Սեւան, 830 էջ:

REFERENCES

Acharyan H. 1979, Hayeren armatakan bararan, h. D, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 676 ej (In Armenian).

Agat'angeghos. 2003, Patmut'iwn Hayots'. – Matenagirk' Hayots', h. B, Ye dar, Ant'ilias-Libanan, ej 1289–1735 (In Armenian).

Ananun Yedesats'i. 1982, Otar aghbyurnery Hayastani yev hayeri masin, 12. – Asorakan aghbyurner B., Zhamanakagrut'yun, ashkh., L. H. Ter-Petrosyani, Yerevan, Haykakan SSH GA hrat., 268 ej (In Armenian).

Ardzern bararan Haykaznean lezui. 1865, yorineats' H. Mkrtich' vrd. Awgerean, yerkrord tpagrut'iwn, Venetik, i Surb Ghazar, 849 ej (In Armenian).

Aznawurean Zareh ark'eps. 2007, Astuatsashunch'in verabereal usumnasirut'iwnner, Ant'ilias, 402 ej (In Armenian).

Babgen kat'voghikos. 2004, [A] t'ught' hayots' i parss. – Matenagirk' Hayots', h. G, Z dar, Ant'ilias-Libanan, ej 113–121 (In Armenian).

Babgen vardapet (At'vorakits' kat'voghikos). 1903, Kat'voghikosakan dzernadrut'iwn yev otsum. – «Arevelean mamul» (Izmir), t'iw 12, ej 265-271, t'iw 13, ej 289–293 (In Armenian).

Ch'amch'eants' Mik'ayel vrd. 1786, Patmut'iwn Hayots', H. G, Venetik, i tparani Yovhannu P'iats'eants', 1092 ej (In Armenian).

Ghazar P'arpets'i. 2003, Patmut'iwn Hayots', T'ught'. – Matenagirk' Hayots', h. B, Ye dar, Ant'ilias-Libanan, ej 2197– 2395 (In Armenian).

GHevond Alishan. 1873, Shnorhali yev paragay iwr, Venetik – Sb. Ghazar, 539 ej (In Armenian).

Grigor Narekats'i. 2013, Matean voghbergut'ean (Narek), S. Ejmiatsin, Mayr At'vor Surb Ejmiatsin, 631 ej (In Armenian).

Hawak'umn patmut'ean Vardanay vardapeti. 1862, Venetik, Sb. Ghazar, 184 ej (In Armenian).

M. Mashtots'i anvan Matenadaran, dzeragir № 4997, «Ejmiatsin», «Ka-novn yorzham kat'voghikos dzernadren Amenayn hayots'», № 1461, 50b–74b (In Armenian).

Matt'eos Urhayets'i. 1869, Zhamanakagrut'iwn, Yerusaghem, «S. Yakovbeants'», 597 ej (In Armenian).

Mayr Mashtots'. 2012, ZH dar, h. A, girk' A, ashkh., Georg Ter-Vardaneani, Sb. Ejmiatsin, 920 ej (In Armenian).

Melik'-T'angean N. ark'eps. 2009, Yekeghets'akan irawunk'y, S. Ejmiatsin, Mayr At'vor Sb. Ejmiatsni hrat., 841 ej (In Armenian).

Mesrop Vayots'dzorets'i. 2010, Patmut'iwn srboyn Nersisi. – Matenagirk' Hayots', h. ZHA, ZH dar, Ant'ilis-Libanan, ej 631–743 (In Armenian).

Movses Kaghankatuats'i. 2011, Patmut'iwn Aghuanits' ashkharhi.– Matenagirk' hayots', h. ZHE, ZH dar, Yerevan, ej 27–437 (In Armenian).

Movsisean Yusik vrd. 2008, Hayastaneayts's arak'elakan s. Yekeghets'woy patmut'iwn, B hrat., S. Ejmiatsin, Mayr At'vor Surb Ejmiatsni hrat., 431 ej (In Armenian).

Nersesi Shnorhalwoy Patmut'iwn varuts'. 1854. – Sop'erk' haykakank', ZHD, Venetik, i tparani Mkhit'areants', 87 ej (In Armenian).

Nor bararan hayerene i yunaren. 1868, ashkh., Timit'rios I. KH. Ch'olagean, Kostandnupolis, tpagrut'iwn Rrubeni Y. K'iwrk'chean, 360 ej (In Armenian).

Ormanean Maghak'ia ark'eps. 1959, Azgapatum, h. A. Hay ughghap'ar yekeghets'woy ants'k'ery skizben minch'ev mer orery yarakits' azgayin paraganerov patmuats, Peyrut', tp. Sevan, 830 ej (In Armenian).

P'awstos Buzand. 2003, Patmut'iwn Hayots'. – Matenagirk' hayots', h. A, Ye dar, Ant'ilias-Libanan, ej 273–428 (In Armenian).

Pogharean Norayr ark'eps. 1990, Tsisagitut'iwn, Niw Yeork', 120 ej (In Armenian).

Samuyel Anets'i yev sharunakoghner. 2014, Zhamanakagrut'iwn, ashkhatasirut'yeamb, Karen Mat'evosyani, Yerevan, «Nairi», 504 ej (In Armenian).

Sebeos. 2005, Patmut'iwn. – Matenagirk' hayots', h. D, E dar, Ant'ilias-Libanan, ej 453–565 (In Armenian).

Smbat Sparapet. 2008, Datastanagirk', p'vokhadrut'yan heghinak yev khmbagir, Mak'sim Andraniki Voskanyan, Yerevan, «Iravunk'», 240 ej (In Armenian).

Step'annos Orbelean. 1861, Patmut'iwn tann Sisakan, ashkh., Mkrtich' Emin, Moskva, 386 ej (In Armenian).

Step'anos Tarawnets'i Asoghik. 2011, Patmut'iwn tiyezerakan. – Matenagirk' Hayots', h. ZHE, ZH dar, Yerevan, ej 619–829 (In Armenian).

T'ovma Metsop'ets'i. 2017, Yishatakaran, ashkh., Ter Ararat k'ahanay Poghoseani, S. Ejmiatsin, Mayr At'vor Surb Ejmiatsni tp., 115 ej (In Armenian).

Tearn Ananiayi hayots' kat'voghikosi patchar yaghags zKhosrov nzoveloyn zAndzevats'wots' yepiskoposn.– «Ararat» (Ejmiatsin), 1897, t'iw Z, ej 275–288 (In Armenian).

Tearn Nersesi Shnorhalwoy Hayots' kat'voghikosi Bank' ch'ap'aw. 1830, Venetik, 621 ej (In Armenian).

Ukhtanes yepiskopos. 2011, Patmut'iwn Hayots'. – Matenagirk' Hayots', h. ZHE, ZH dar, Ant'ilias-Libanan, ej 441–616 (In Armenian).

Vahramay Rabunwoy votanawor patmut'iwn Rrubeneants'. 1859 (kits' Sm-bat Sparapeti «Taregrk'i» p'arizyan hratarakut'yany), P'ariz, ej 181–248 (In Armenian).

Vardan Hats'uni. 1923, Patmut'iwn hin hay tarazin patkerazard, Venetik, Sb. Ghazar, 467 ej (In Armenian).

Yndhanrakan t'ught'k' Srboyn Nersisi Shnorhalwoy. 1871, Yerusaghem «S. Yakovbeants'», 334 ej (In Armenian).

Yovhan Mayragomets'i. 2005, Vasn paterats' yev nkaragrut'eants'. – Matenagirk' hayots', h. D, E dar, Ant'ilias-Libanan, ej 343–359 (In Armenian).

РУКОПОЛОЖЕНИЕ В КАТОЛИКОСЫ И ЕГО ПОМАЗАНИЕ ПО БИБЛИОГРАФИЧЕСКИМ СВЕДЕНИЯМ (IV–XII вв.)

ДИАКОН ЕГИШЕ САРГСЯН

Резюме

Ключевые слова: католикос, хиротония, помазание, хиротесия, библиографические сведения, историки, стадии.

Упоминания о рукоположении (хиротонии) в католикосы и его помазании можно встретить в рукописях. На основе дошедших до нас библиографических сведений почти отсутствует подробное описание обрядовых правил рукоположения и помазания. Наличие эпизодов рукоположения католикоса в библиографических трудах и их содержание позволяют заключить, что ритуал развивался постепенно. С IV по XII век он прошел стадии «эмбриона», «формирования» или «становления». Начиная с XIV века правила рукоположения и посвящения в католикосы подробно упоминаются в обрядах «Маштоца». Дошедшие до нас фрагментарные библиографические ссылки восполняют сведения о генезисе и становлении обряда.

Диакон Егише Саргсян – аспирант, секретарь-делопроизводитель, преподаватель Геворгянской духовной семинарии (духовного университета) Первопрестольного Святого Эчмиадзина. Научные интересы: литурги-

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 1

ческое и историческое богословие, изучение литургических рукописей. Автор 3 статей. ORCID:0009-0005-7452-1487. deacon.yeghishe@gmail.com

ORDINATION OF THE CATHOLICOS AND HIS CONSECRATION ACCORDING TO BIBLIOGRAPHIC INFORMATION (IV–XII cc.)

DEACON YEGHISHE SARGSYAN

S u m m a r y

Keywords: Catholicos, ordination, consecration, cheirothesia, bibliographic information, historians, periods.

References to the Catholicosic ordination and consecration can be found in the works of the chroniclers. Based on the bibliographic information that has come down to us, there is almost no detailed description of the ritual rules of ordination and consecration. The presence of episodes of the ordination of the Catholicos in bibliographic works and their content allow us to conclude that the ritual developed gradually. It went through periods of “embryonation”, “formation” or “establishment” from the 4th to the 12th centuries. Starting from the 14th century, the rules of the ordination and consecration of the Catholicos are mentioned in detail in the rites of “Mashtots”. The fragmentary bibliographic references that have reached us come to fill the lack of information about the genesis and establishment of the rites.

Deacon Yeghishe Sargsyan – Ph.D. Student, Secretary-official in charge, Lecturer of Gevorgyan Theological Seminary (Theological University) of Mother See Holy Etchmiadzin. Scientific interests: liturgical and historical theology, studies of liturgical manuscripts. Author of 3 articles.
ORCID:0009-0005-7452-1487. deacon.yeghishe@gmail.com